

Նոր Տարւոյ Կաղանդչէքերու Բաղխում

12 Յունուար 2006
Երուսաղէմ

Հինգշաբթի, 12 Յունուար յ. մ. ժամը 3ին, Հ.Ս.Ը.Մ.ի սրահ հաւաքուած Հ.Օ.Մ.ի - Հ.Ս.Ը.Մ.ի ընտանիքի թէ համակրաց երախաներու աղմուկը կարելի էր Մեծ Բակէն լսել: Դժուար թէ Կաղանդ Պապան, հակառակ իր ծանր ականջներուն, չլսէր այդ աղմուկը ու չաճապարեր ակումբ ուր աւելի քան 100 մանուկներ մեծ մասամբ իրենց ծնողքներու ընկերակցութեամբ կը ծափէին ու կը բացագանչէին իրենց համար մասնաւորապէս բերուած խամաճիկներու շարժումներուն զուգահեռ ձեւով մը ժամանակ սպաննելով մինչեւ Կաղանդ Պապային ժամանումը:

Վերջապէս, Կաղանդ Պապան ժամանեց ու Հ.Օ.Մ.ի վարչուհիեաց օժանդակութեամբ յաջողեցաւ գոհացում տալ երախաներու ականկալութեանց, որոնց շատերը լացով, շատերը կրակ աչքերով, շատերը Կաղանդ Պապան գովերգելով աւելի ճիշդը թոթովելով ձեռք առին իրենց նուէրները որմէ ետք առաւել ժամու մը ծափ ու աղմուկէ ետք ճամբայ դռին Կաղանդ Պապան հաւանաբար դէպի Հ.Ե.Մ.ի ակումբ:

Ուրբաթ, 13 Յունուար 2006ի առաւօտեան, շրջանիս Հայ Երիտասարդաց Միութիւնը իր սրահի մէջ ընդունեց Կաղանդ Պապան ու իր ընտանիքի երախաները ստացան իրենց կաղանդչէքերը:

Նոյն օրը, յ.մ. ժամը 3ին, Կաղանդ Պապան ժամանեց Ե.Հ.Բ.Միութեան սրահը ուր նոյնպէս շատ սիրալիր ընդունելութիւն գտաւ Հայ քաղաքացիներու ու երեխայաց կողմէ:



